ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 09/19

ք. Գյումրի «29» մարտի 2019 թ.

«Ընտանիք» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ա. Մինասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ Մարգարիտ Արծրունյանը, ի դեմս Մարգարիտ Արծրունյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատուցել Պայմանագրի N 1 հավելվածով, Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված հետևյալ հոդվածներով ծառայությունները, (այսուհետ Ծառայություն)՝ /Թղթե կամ ստվարաթղթե գրանցամատյաններ, հաշվառման գրքեր, արագակարեր ձևաթղթեր և տպագիր գրենական պիտույքների այլ պարագաներ/, /Տպագրված գրքեր, թռուցիկներ և բրոշյուրներ/, /Անվտանգության որոշակի աստիճան ունեցող տպագիր նյութեր /,/Տպագրական ծառայություններ/ իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ծառայությունը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատուցելու դեպքում հրաժարվել Ծառայությունից, եթե մատուցման ժամկետները խախտվել են 7 աշխատանքային օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն՝

ա) պահանջել հատուցելու Ծառայության անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ծառայությունն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող որակի Ծառայությունով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայությունի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ծառայություն, ապա՝

ա) պահանջել լրացնելու Ծառայությունի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ծառայությունից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ծառայությունի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ծառայություն, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ծառայությունը և հրաժարվել մնացած Ծառայություններից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ծառայություններից և պահանջել վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ծառայությունի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ծառայությունով:

2.1.5 Վաճառողի կողմից մատուցման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ծառայությունի մատուցման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ծառայություն՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ծառայությունն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցվել է անպատշաճ որակի Ծառայություն որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ծառայությունի մատուցման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել Ծառայությունը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայությունի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած Ծառայությունից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ծառայությունի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատուցված Ծառայությունն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ծառայությունի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ծառայությունի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատուցված Ծառայությունը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատուցված և Գնորդի կողմից ընդունված Ծառայությունի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ծառայությունի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատուցել Ծառայությունը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել Ծառայությունը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել Ծառայությունի մատուցումը Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ծառայություն:

2.4.5 Գնորդին հանձնել Պայմանագրով նախատեսված որակի և քանակի Ծառայություն՝ Պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ծառայությունի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատուցում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատուցվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ծառայությունը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ծառայությունը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել Ծառայությունի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 790 500 /յոթ հարյուր իննսուն հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ծառայությունի մատուցման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատուցված Ծառայությունի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատուցված Ծառայության որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող Ծառայությունների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ծառայությունն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատուցված Ծառայության թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[1]:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (հավելված N 4): ստորագրմամբ: Ծառայությունը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ծառայության որակի և Պայմանագրով նախատեսված մատուցման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք Ծառայությունը չի հանդիսանում հիմնական միջոց: Իսկ եթե գնվելիք Ծառայությունը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ Պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով
սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը: Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայությունի ծավալների կամ ձեռք բերվող Ծառայությունի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե Պայմանագիրն իրականացվում է գործակալության Պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ծառայությունի մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել Ծառայությունի օգտագործման պահանջը:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով Պայմանագիրը չի կարող փոփոխվել կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայությունի մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝

---

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է*

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայությունի մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը և Պայմանագրի N 1, N 2, N 3 N4 N 4.1 հավելվածները, որոնք համարվում են Պայմանագրի անբաժանելի մաս, կազմված են ——— էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենքները և համապատասխան իրավական ակտերը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
«Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ	Ա/Ձ Մարգարիտ Արծրունյան
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2	ք. Գյումրի Կրուպսկայայի փ 93
ՀՎՀՀ 05504412	ՀՎՀՀ 87321645
Հ/Հ 900018005554	Հ/Հ 1930045842260100
Երևանի թիվ 1 ՏԳԲ	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Ա. Մինասյան	Մ. Արծրունյան
_____	_____
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«29» մարտի 2019 թ. կնքված
ԸՆՏ ՄԱ-ԱՊՁԲ 09/19 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և Ծառայությունա յին նշանը	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման		
								հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
22800000 Թղթե կամ ստվարաթղթե գրանցամատյաններ, հաշվառման գրքեր, արագակարեր ձևաթղթեր և տպագիր գրենական պիտույքների այլ պարագաներ										
1.	22851200	Մատյանի տպագրություն	Հաճախումների հաշվառման դասամատյան 12 էջ 70-80գ/քմ, կողը սպիտակ ստվարաթղթե, չափը՝ A4, տպագրությունը միագույն՝ սև	հատ	500	25000	50	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	50	20.12.19 թ
Ընդամենը						**25000**				
22110000 Տպագրված գրքեր, թռուցիկներ և բրոշյուրներ										
2.	22141300	Տեղեկատվական թերթիկ /Կոմիտաս/	Գույները՝ 4+4, չափերը՝ 21սմ*29,5սմ ծալված 3 մասի Տպագրությունը բարձր որակի, վրիպակներից զերծ և համապատասխան ГОСТ 4.482-87, 7.4-95, 7.53-01, ՀUS 311-09 չափանիշներին,	հատ	400	80000	200	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	200	20.12.19 թ
3.	22141300	Ծալաթերթ /2էջ/ A5 ձևաչափ	Գույները՝ 4+4, չափերը՝ A5 ծալված 2 մասի Տպագրությունը բարձր որակի, վրիպակներից զերծ և համապատաս	հատ	200	100000	500	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	500	20.12.19 թ

			խան ГОСТ 4.482-87, 7.4-95, 7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին							
Ընդամենը						**180000**				
22450000 Անվտանգության որոշակի աստիճան ունեցող տպագիր նյութեր										
4.	22451180	Հրավիրատոմս /A5 250գ/Մք/, ծրարով՝ գունավոր տպագրությամբ	Հրավիրատոմս /A5 250գ/Մք/, 15-16 օֆսեթ տպագրության, որակյալ, փայլատ, սպիտակ, ծրարով՝ գունավոր տպագրությամբ	հատ	500	62500	125	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/4	125	20.12.19 թ
5.	22451290	Շնորհակալագիր /A4 250գ/Մք/	Շնորհակալագիր A4 ձևաչաձի15-16 օֆսեթ տպագրության, որակյալ, փայլատ, սպիտակ, գունավոր տպագրությամբ, 250գ/քմ թղթով	հատ	500	38000	76	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/4	76	20.12.19 թ
6.	22451190	Պատվոգիր /A4 250գ/Մք/	Պատվոգիր A4 ձևաչաձի 15-16 օֆսեթ տպագրության, որակյալ, փայլատ, սպիտակ, գունավոր տպագրությամբ, 250գ/քմ թղթով	հատ	500	122000	244	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/5	244	20.12.19 թ
7.	22451200	Վկայական	Մաշկալաթե կողով վկայական A5 ձևաչափի	հատ	500	25000	50	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/6	50	20.12.19 թ
Ընդամենը						**247500**				
79810000 Տպագրական ծառայություններ										
8.	79810000	Ցուցապաստառ գունավոր տպագրությամբ	Ցուցապաստառի լայնաֆորմատ գունավոր տպագրություն, միակողմանի, մետաղական շրջանակով	քառ.մ	4000	48000	12	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	12	20.12.19թ
9.	79810000	Տեղեկատու ծրագրի	Տեղեկատու Հովհաննես Թումնայանի 150-ամյակին	հատ	5000	35000	7	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	7	20.12.19թ

			նվիրված «Կախարդական գրչի վարպետը» խորագրով միջոցառումների շարքի,35-45էջ, գունավոր տպագրությամբ A4 ձևաչափի 80գ/քմ թղթի վրա, թափանցիկ թաղանթից կողով							
10.	79810000	Տեղեկատու	Տեղեկատու Կոմիտասի 150-ամյակին նվիրված «Ողողանջ ցնծության» խորագրով միջոցառումների շարքի,35-45էջ, գունավոր տպագրությամբ A4 ձևաչափի 80գ/քմ թղթի վրա, թափանցիկ թաղանթից կողով	հատ	5000	40000	8	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/16	8	20.12.19թ
11.	79810000	Ծրագրի տեղեկատուի պատրաստում	Տեղեկատու «Ընտանիք»-ն անիվների վրա» ծրագրի,35-45էջ, գունավոր տպագրությամբ A4 ձևաչափի 80գ/քմ թղթի վրա, թափանցիկ թաղանթից կողով	հատ	5000	70000	14	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/17	14	20.12.19թ
12.	79810000	Ծրագրի տեղեկատուի պատրաստում	Տեղեկատու «Հայրենիքի հզոր պաշտպան» խորագրով հայրենասիրական պատանեկան ամառային դպրոց ծրագրի,35-45էջ, գունավոր տպագրությամբ A4 ձևաչափի 80գ/քմ թղթի վրա, թափանցիկ թաղանթից կողով	հատ	5000	50000	10	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/18	10	20.12.19թ
13.	79810000	տպագրություն	Սեմինարի անցկացման համար նախատեսված նյութերի տպագրություն, գունավոր և միագույն տպագրությամբ, A4 ձևաչափի	հավաք	5000	5000	1	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1	20.12.19թ

			թղթի վրա, կարված թղթապանակի մեջ /20-50 էջ/							
14.	79810000	Տարեկան տեղեկատուի տպագրություն	«Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի կողմից 2018-2019թթ ուս. Տարում անցկացված միջոցառումների տեղեկատու,80-180էջ, գունավոր տպագրությամբ A4 ձևաչափի 80գ/քմ թղթի վրա, թափանցիկ թաղանթից կողով	հատ	15000	90000	6	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	6	20.12.19թ
Ընդամենը						**338000**				

Մատուցման ժամկետը. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո ամենաուշը 7 աշխատանքային օրվա ընթացքում :

ԳՆՈՐԴ
«Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05504412
Հ/Հ 900018005554
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Ա. Միհնասյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
Ա/Ձ Մարգարիտ Արծրունյան

ք. Գյումրի Կրուպսկայայի փ 93
ՀՎՀՀ 87321645
Հ/Հ 1930045842260100
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Մ. Արծրունյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«29» մարտի 2019 թ. կնքված
ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 09/19 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման ժամանակացույց Մատուցման ժամկետը և վայրը	Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո ամենաուշը 7 աշխատանքային օրվա ընթացքում : Ծառայությունի տեղափոխումը իրականացնում է մատուցը , հասցե ք.Գյումրի ,Անի թաղ. 11փ. 5/2
Վճարման ժամկետը /վճարման ժամանակացույց	Վճարումներն իրականացվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում հաստատված ընդունման –հանձման արձանագրությունների հիման վրա 20 աշխատանքային օրում :

ԳՆՈՐԴ
«Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05504412
Հ/Հ 900018005554
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Ա. Միհնասյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
Ա/Ձ Մարգարիտ Արծրունյան

ք. Գյումրի Կրուպսկայայի փ 93
ՀՎՀՀ 87321645
Հ/Հ 1930045842260100
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Մ. Արծրունյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«29» մարտի 2019 թ. կնքված
ԸՆՏ ՄԱ ԱՊՁԲ 09/19 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	22800000	Թղթե կամ ստվարաթղթե գրանցամատյաններ, հաշվառման գրքեր,արագակարեր ձևաթղթեր և տպագիր գրենական պիտույքների այլ պարագաներ						25000	25000	25000	25000	25000	25000	25000	25000
2-3	22110000	Տպագրված գրքեր, թռուցիկներ և բրոշյուրներ					100000	100000	100000	100000	180000	180000	180000	180000	180000
4-7	22450000	Անվտանգության որոշակի աստիճան ունեցող տպագիր նյութեր				65000	97500	147500	160000	165000	242500	247500	247500	247500	247500
8-13	79810000	Տպագրական ծառայություններ				12000	82000	141000	141000	208000	248000	338000	338000	338000	338000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
«Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05504412
Հ/Հ 900018005554
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Ա. Մինասյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
Ա/Ձ Մարգարիտ Արծրունյան

ք. Գյումրի Կրուպսկայայի փ 93
ՀՎՀՀ 87321645
Հ/Հ 1930045842260100
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Մ. Արծրունյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 4
«29» մարտի 2019 թ. կնքված
ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 09/19 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ Ծառայությունագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ Ծառայությունները՝

N	Մատուցված Ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ Ծառայությունագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«29» մարտի 2019 թ. կնքված
ԸՆՏ-ՄԱ ԱՊՁԲ 09/19 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված Ծառայությունները.

Ծառայությունի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
«29» մարտի 2019 թ. կնքված
ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 09/19ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ
Ա/Ձ Մարգարիտ Արծրունյան
ք. Գյումրի Կրուպսկայայի փ93
hh1930045842260100
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
hվhh87321645

Պատվիրատու
«Ընտանիք» ՄՊՄԿՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
hh900018005554
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հվhh05504412

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«03» «ապրիլի» 2019 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պայմանագիր**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «29» «մարտի» 2019թ.

Պայմանագրիհամարը՝ ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 09/19

Պատվիրատուն կՊայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «03» «ապրիլի»2019թ. դուրս գրված N՝9546562510հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
3.	Ցուցապաստառի պատրաստում	Ցուցապաստառի գունավոր լայնաֆորմատ տպագրություն, մետաղական շրջանակի ամրացում	3	3	04.04.2019	03.04.19	12.00	30.04.19

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
ստորագրություն
Մ. Արծրունյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
ստորագրություն
ազգանուն, անուն
Կ.Տ.

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
3	Ապրիլ	2019 թ.		Բ	9546562510
[4] Մատուցման ամսաթիվը					
3	Ապրիլ	2019 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	8	7	3	2	1	6	4	5		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[10] Անվանումը	ՄԱՐԳԱՐԻՏ ԱՐԾՐՈՒՆՅԱՆ Անհատ ձեռնարկատեր (ԱՁ)									
[11] Բանկային տվյալները	Կոնվերսբանկ ՓԲԸ	N 1930045842260100								
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԿՐՈՒՊՍԿԱՅԱՅԻ Փ. 93									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի										
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	5	5	0	4	4	1	2		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	ՀՀ ԿԳՆ <ԸՆՏԱՆԻՔ> ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ)									
[17] Բանկային տվյալները	Երևանի թիվ 1 ՏԳԲ	N hh 900018005554								
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԱՆԻ ԹՂՄ. 11 Փ. 5 2									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N/Ա	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Ցուցապաստառի պատրաստում	քմ	3	4000		12000
Ընդամենը						12000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ ARTSRUNYAN MARGARIT 6114850149

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝ MINASYAN ARTUR 2505620598

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

03/04/2019 15:52:16

03/04/2019 18:31:41